«ԱՐՄԱՎԻՐ 1» ՎԿ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ Արմավիր մարզի Ալաշկերտի Հ Քոչարի անվան

Թեմա՝ Արժեքային համակարգի ձևավորումը կրտսեր դպրոցում

Վերապատրաստող, մենթոր Ա. Անտոնյան

Ուսուցիչ՝ Գ. Ապիտոնյան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ներածություն---------- էջ 3
2. Գրական ակնարկ---------- էջ 6
3. Սովորողների արժեհամակարգի ձևավորումը կրտսեր դպրոցում ----- էջ 9
4. Սովորողների արժեհամակարգի ձևավորումը մայրենիի դասավանդման ընթացքում՝ հեքիաթի միջոցով---------- էջ 12
5. Սեփական փորձառության ներկայացում---------- էջ 15
6. Եզրակացություններ---------- էջ 17
7. Օգտագործված գրականության ցանկ---------- էջ 19

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Արժեքները մատնահետքերի նման են:

Յուրաքանչյուր մարդու մեջ դրանք տարբեր են,

և դու նրանց թողնում ես ամեն բանի մեջ:

Ասեզիդ Հաբտեվոլդ

Մեր երկրում աշակերտների արժեքային համակարգի ձևավորումը ներառված է ՀՀ պետական չափորոշչում՝ որպես հենց կրթության բովանդակային բաղադրիչ: Յուրաքանչյուր ուսումնական առարկայի մասով սովորողների պատրաստվածությունը ներկայացնող գիտելիքային պահանջի մեջ առանձին կետով նաև նշվում է արժեքները և դրանց ձևավորումը, որոնք պետք է տա դպրոցը:

«Արժեհամակարգ» հասկացությունը մանկավարժական գիտության մեջ ըմբռնվում է բավական լայն շառավիղով: Առավել ընդունված է այն ընկալումը, որ արժեհամակարգը մարդու բարոյական, գեղագիտական, հոգևոր, իմացական, մշակութային և էթնիկական արժեքների համախումբն է, որն անհրաժեշտ է անձի ներդաշնակ, բազմակողմանի ձևավորման և զարգացման համար: Այսօր աճող սերնդի դաստիարակության գործն ընթանում է տարբեր հանգամանքների ազդեցության ներքո՝ ազգային, ժողովրդագրական, մշակութային, ընտանեկան, կրթական, հասարակական, սոցիալական և այլն: Հաշվի առնելով բազմաթիվ այս և այլ հանգամանքներ՝ ժամանակակից մանկավարժության համար խնդիր է դառնում սովորողների ազգային գիտակցության ձևավորումը սեփական ժողովրդի պատմության ու մշակույթի հենքի վրա՝ չանտեսելով համամարդկային արժեքները: Գաղտնիք չէ, որ այսօր սովորողների արժեքային համակարգի ձևավորումը ուղղակիորեն կապված է հասարակության մեջ տեղի ունեցող բազմաթիվ փոփոխություններով:

21-րդ դարում նոր տեխնոլոգիաները, ծրագրերը, կրթական համակարգում տեղի ունեցող փոփոխություններն ու նորարարությունները թելադրում են նորովի մոտեցում յուրաքանչյուր աշակերտի: Աշխարհաքաղաքական այս վայրիվերումների

ճանապարհին կարևոր դեր ունի ուսուցիչը՝ արժեհամակարգ ձևավորելու և հումանիստ, հայրենասեր, ընտանիքը կարևորող սերունդ դաստիարակելու գործում:

Երեխաները դպրոց են գալիս տարբեր ընտանիքներից և նրանց համար ընդունված արժեհամակարգային չափանիշը պայմանավորված է իրենց միջավայրով: Յուրաքանչյուր դասի դաստիարակչական խնդիրների լուծումը նախատեսում է արժեքային որակների, կամքի, բնավորության, զգացմունքների, հոգեբանական տարբեր դրսևորումների միաժամանակյա և փոխկապակցված մոտեցում: ՈՒսուցիչը ուսուցման կազմակերպման տարբեր ձևերի (խաղ, էքսկուրսիա, դասղեկական ժամ, արտադասարանական միջոցառում, հարց ու պատասխան) ընտրության միջոցով առավել արդյունավետ է դարձնում աշակերտների արժեհամակարգային դաստիարակչական խնդիրների լուծումը:

Խնդիրը դիտարկվում է տարրական դպրոցում մայրենիի ուսուցման գործընթացի արդյունավետ կազմակերպման մեթոդների ընտրության, նպատակային և հետևողական կիրառման համատեքստում, քանի որ երեխայի բարոյական, հոգևոր, գեղագիտական, իմացական, մշակութային և ազգային արժեքների ձևավորման համար մեծ նշանակություն ունի տարրական դպրոցը, մասնավորապես՝ հումանիտար ոլորտի ուսումնական առարկաների հիմքերն արմատավորող մայրենին:

Այս առումով անհերքելի է մայրենիի ուսումնասիրման գործընթացում գրական-գեղարվեստական ստեղծագործությունների բանահյուսական պատառիկների ուսուցման նշանակությունը և կարևորությունը: Վերջիններս օժտված են կրտսեր դպրոցականների արժեհամակարգի ձևավորման հսկայական ներուժով: Այդ ստեղծագործություններում արտահայտված են մեր ժողովրդի հոգեկերտվածքը, աշխարհընկալումը, մարդասիրական գաղափարներն ու գալիքի երազանքները: Այս ամենն է, որ անհրաժեշտ է ավանդել ժամանակակից էթնոկրին: Այսպես նա պիտի հասնի այն գիտակցությանը, որ հասարակական կյանքի առաջընթացը պայմանավորված է համախմբվածությամբ, հանդուրժողականությամբ, մշակութային արժեքների ոչ միայն ստեղծմամբ, այլև՝ պահպանմամբ:

Սերունդ, որը կկարողանա շարունակել ազգային լավագույն ավանդույթները, աշխարհին ու մարդկությանը ցույց տալ իր մշակութային հարստությունն ու բարոյահոգեբանական արժեքները:

Հետազոտության նպատակն է. Ուսումնասիրել սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը առարկայի դասավանդման ընթացքում, ցույց տալ կրտսեր դպրոցի դերը:

Հետազոտության խնդիրները. Նպատակից ելնելով ձևակերպում ենք հետևյալ խնդիրները.

- ուսումնասիրել թեմային վերաբերող գիտաուսումնական գրականությունը:

- պարզել՝ ի՞նչ ասել է «արժեքային համակարգ» դրա բովանդակությունը մայրենիի դասավանդման համատեքստում:
- բացահայտել արժեքային համակարգի հանդուրժողականության և վարվելակերպի ձևավորման ուղիներն ու միջոցները:
- ուսումնասիրել հեքիաթների ազդեցությունը սովորողների արժեքային համակարգի գործում:

ԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Արժեքը, աշխարհի յուրահատուկ ընկալումն է, որը ձևավորվում է ոչ միայն ձեռք բերված գիտելիքի և ինֆորմացիայի, ալև սեփական կենսափորձի հիման վրա: Նոր սերնդի արժեհամակարգի ձևավորման, կրթության և դաստիարակության գործում լուրջ անելիքներ ունի հայ դպրոցը, որի գերնպատակն է կերտել բարոյական, ազգային արժեքներով օժտված, ազգային նկարագիր ունեցող սերունդ: Ժամանակակից դպրոցի կարևորագույն առաքելություններից մեկն էլ երեխայի մեջ իր ազգին բնորոշ բարոյական և հոգևոր արժեքների ձևավորումն ու զարգացումն է: Նրա խնդիրն է պահպանել և փոխանցել այն արժեքները, որոնք ժառանգել ենք մեր նախնիներից, և որը մեր անխառն ինքնատիպությունն է համաշխարհային մշակույթի բազմերանգության և բազմազանության մեջ: ՈՒստի 21-րդ դարի դպրոցում դաստիարակութան և կրթական գործընթացի ճիշտ կազմակերպման համար շատ կարևոր են ոչ միայն համամարդկային, այլև հայրենի մշակույթի բարձրարժեք ստեղծագործությունների ուսումնասիրումն ու ուսուցումը:

Այդ ստեղծագործություններում արտահայտված են մեր ժողովրդի հոգեկերտվածքը, աշխարհընկալումը, մարդասիրական գաղափարներն ու գալիքի երազանքները: Հայ ժողովրդների ավանդույթներում է, որ վառ կերպով արտացոլված են մեր ազգային հավաքական բնույթը, անդրդվելի կամքը, ներքին զորությունն ու հնարավորությունները, ապրելու, վերածնվելու, և հարատևելու ունակությունը:

Այդպես նա պիտի հասնի այն գիտակցության, որ հասարակական կյանքի առաջընթացը պայմանավորված է համախմբվածությամբ, գիտելիքների բարձր մակարդակով ու մշակութային արժեքների ոչ միայն ստեղծմամբ, այլև պահպանմամբ: Սերունդ, որը կկարողանա շարունակել ազգային լավագույն ավանդույթները, աշխարհին ու մարդկությանը ցույց տալ իր մշակութային հարստությունն ու բարոյահոգեբանական արժանիքները:

Արժեհամակարգի ձևավորման և նրա հարաբերական կայունության ապահովման համար հանրակրթության բնագավառում կարևոր և անփոխարինելի նշանակություն ունեն բոլոր ուսումնական առարկաները, որոնց թվում, այնուամենայնիվ, արժեքների ձևավորման առումով չափազանց մեծ է հումանիտար ոլորտի ուսումնական առարկաների դերը, մասնավորապես՝

մայրենիի դերը: Արժեքների ուսումնասիրության բնագավառում իր ուրույն հետազոտությունն է կատարել Շվարցը:

Ըստ հեղինակի, երբ մարդն մտածում է արժեքների մասին առաջին հերթին առանձնացնում է, թե որ արժեքներն են առավել կարևոր իր համար կյանքում:

Որոշակի կոնկրետ արժեք կարող է կարևոր լինել մեկի համար, բայց բացարձակ անկարևոր մյուսի համար: Արժեքների տեսությունում կարևորվում է այն հայեցակարգը, որտեղ առանձնացվում են արժեքների ներքոնշյալ վեց հատկանիշները.

- Արժեքները համոզմունքներ են: Մարդիկ, որոնց համար անկախությունը կարևոր արժեք է, սթափվում են, երբ նրանց անկախությունը վտանգվում է, հուսահատվում են, երբ անկարող են լինում այն պաշտպանելու, և վերջապես երջանիկ են, երբ կարող են վայելել այն:
- Արժեքները կապված են ցավալի նպատակների հետ, որոնք մոտիվացնում են մարդուն կատարելու որոշակի գործողություններ: Մարդիկ, որոնց համար հասարակական կարգը, արդարությունը կարևոր արժեքներ են, մոտիվացնում են հետապնդել այդ նպատակները:
- Արժեքները լայն և ընդգրկուն հասկացություններ են: Այս հատկանիշը տարբերակում է արժեքներն ավելի նեղ հասկացություններից, ինչպիսիք են նորմերը և մոտեցումները, որոնք սովորաբար վերաբերում են կոնկրետ գործողությունների, օբյեկտների կամ իրավիճակների:
- Արժեքները ծառայում են որպես սկզբունքներ կամ չափանիշներ: Արժեքներն ուղղորդում են մարդկանց որոշակի գործողությունների:
- Մարդիկ որոշում են, թե ինչն է լավ, ինչը՝ վատ, արդարացնում կամ մեղավոր են ճանաչում, գործում կամ խուսափում են՝ հենվելով իրենց համար թանկ արժեքների հնարավոր հաջորդականության վրա:
- Մարդու գործողություններն ուղղորդվում են բազմաթիվ արժեքներով: Ցանկացած վարքագծի կամ վերաբերմունքի վրա ազդում են ոչ թե մեկ, այլ բազմաթիվ արժեքներ:

Ըստ Շվարցի վերը թվարկվածը վերաբերում է բոլոր արժեքներին: Արժեքների մեկ այլ տեսություն էլ ներկայացրել է Մ. Ռոկիչին: Ըստ նրա արժեքները բնութագրվում են են հետևյալ հատկություններով:

- Մարդուն հատուկ արժեքների քանակը այնքան էլ մեծ չէ:
- Բոլոր մարդիկ ունեն միևնույն արժեքները, սակայն տարբեր մակարդակներով:

- Արժեքները կազմավորված են համակարգում:
- Արժեքների աղբյուրները դիտվում են մշակույթում, հասարակությունում և անձի մեջ:

Դ. Ս. Լիխաչևն իր «Նամակներ լավի և գեղեցիկի մասին» աշխատության մեջ որոշ կողմերից փորձում է բացահայտել մարդկային արժեքների գաղափարը: Նա ամենակարևոր արժեքը համարում է կյանքը՝ ուրիշի, իր սեփական, կենդանիները և բույսերը: Նա ասում է, որ կյանքը սահմաններ չունի, և պետք է սովորել զգալ և տեսնել ոչ նյութականը:

Բարությունը սովորեցնող ժամանակը և արվեստը, ըստ Լիխաչովի, նույնպես ամենակարևոր արժեքներ են:

Առանձին ազգի համար արժեքը նրա մշակութն ու լեզուն է, իսկ ողջ մարդկության համար՝ գեեցկությունն ու սերը:

Աճող սերնդի արժեքային համակարգի ձևավորման մասին նաև գաղափարներ են արտահայտել Դ.Անհաղթը, Ա. Շիրակացին, իսկ Խ.Աբովյանը ցանկանում էր հիմնել նոր տիպի դպրոց: Նա մեծ տեղ էր հատկացնում մտավոր կրթությանը, բարոյական, գեղագիտական, աշխատանքային և ֆիզիկական դաստիարակությանը: Մ.Նալբանդյանը դպրոցի վերաբերյալ իր դրույթներից մեկում գրում է. «Դպրոցական կրթությունը պետք է ապահովի երեխայի համակողմանի ու ներ-դաշնակ զարգացումը, ձևավորի արժեքային համակարգ»:

Ղ.Աղայանի մանկավարժական գործունեության առանցքային խնդիրը եղել է երեխայի համակողմանի ու ներդաշնակ զարգացումը, որի համար կարևոր էր համարում մտավոր, բարոյական, գեղագիտական, աշխատանքային դաստիա-րակությունը:

ՈՒստի կարող ենք ասել, որ կախված հասարակության նորմերից, մարդու շրջապատից և ընտանեկան կարգավիճակից արժեքային համակարգը ցանկացած մարդու համար անհատական է ու յուրովի:

ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵԱՎՈՐՈՒՄԸ ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑՈՒՄ

Կրթական տարբեր աստիճաններում աշակերտն ունենում է աշխարհի նկատմամբ վերաբերմունքի տարբեր դրսևորումներ և հարաբերություններ: Վերաբերմունքն աշխարհի նկատմամբ և հարաբերությունը աշխարհի հետ, վերաբերմունք սեփական անձի նկատմամբ և հարաբերությունն ինքն իր հետ իրականացնում են հասարակական դաստիարակության համակարգի (ուսումնական հաստատություններ, հասարակական, պետական, խորհրդակցական մարմիններ, մանկապատանեկան կառույցներ) և տեղեկատվական տեխնոլոգիաների (հեռուստատեսության, համացանցային լրատվական միջոցներ, մամուլ) միջոցով: Կինոն, թատրոնը, հեռուստատեսությունը, համացանցը ներգործում են աշակերտի անձի վրա ոչ միայն ինքնին՝ որպես տեղեկատվության աղբյուրներ, այլ նաև որոշակի տիպարների միջոցով, որոնք դրսևորվում են այդ «տեղեկատվական աղբյուրներից հոսող» հերոսների վարքագծում: Աշակերտները, իրենց տարիքային, անհատական առանձնահատկություններին համապատասխան, հակված են նույնացնել իրենց այս կամ այն հերոսի հետ՝ յուրացնելով նրանց վարքի ձևերը, ապրելակերպը, հագուստը, կենցաղը, կյանքի ոճը և ալն:

Աշակերտի արժեքների ձևավորման վրա ազդող գործոններից են ավանդական միջոցները, այսինքն՝ աշակերտի մեջ աշխարհի նկատմամբ վերաբերմունքի և հասարակության հետ հարաբերության, սեփական անձի նկատմամբ վերաբերմունքի ձևավորումը ընտանիքի և սոցիալական միջավայրի միջոցով: Ավանդական միջոցների յուրացումը լինում է չգիտակցված՝ վարքի ընդունված կաղապարներին ընդօրինակելու միջոցով: Այս առումով իրավացի է Մ. Մոնտենը. «Մենք որքան ասես կարող ենք պնդել մերը, սակայն սովորույթն ու համընդհանուր կանոնները մեզ քարշ են տալիս իրենց ետևից»:

Աշակերտի արժեքների ձևավորման վրա ազդող մյուս գործոնը տարիքայինն է, երբ սովորողի արժեքային կողմնորոշումները, արժեքային նախապատվությունները, վարքն ու բարոյահոգեբանական գծերը դրսևորվում են ըստ տարիքային և կազմաբանախոսական առանձնահատկությունների:

Տարիքային դաստիարակությանը բնորոշ են արժեքների որոշակի աստիճանակարգությունը: Սակայն այստեղ ամենակարևորը մանկավարժների կողմից «աշակերտների մեջ կյանքի նկատմամբ դրական վերաբերմունքի, ապրած

յուրաքանչյուր օրվա համար ուրախության զգացում ապրելու ունակության ձևավորումն է»:

Սովորողի անձի արժեքների ձևավորման վրա ազդող մյուս գործոնը միջանձնային հարաբերություններն են կամ իրենց համար հեղինակավոր, երևելի մարդկանց հետ շփումները (ծնողներ, ուսուցիչներ, մեծահասակներ, ընկերներ և այլն): Բնական է, որ այդ հեղինակավոր անձինք կարող են լինել նաև աշակերտի վրա ներգործող հասարակական այս կամ այն կազմակերպությունների անդամները, դպրոցի տնօրենը, դասղեկը, ուսուցիչը և այլն: Աշակերտը նրանցից կարող է ստանալ արժեքների վերաբերյալ ինչպես դրական մոդելներ, այդպես նաև բացասական: Բացասական մոդելները հակում ունեն ձևավորվելու ավելի արագ և անդառնալի բացասական ազդեցություն կարող են ունենալ սովորողի անձի արժեքային ճիշտ դաստիարակութան վրա: Հետևաբար արժեքների դաստիարակության այս բնագավառը պահանջում է մանկավարժական խստագույն վերահսկողություն և ըստ հարկի՝ նաև միջամտություն:

Աշակերտի արժեքների ձևավորման խնդիրները բնականաբար լուծվում են ոչ միայն ընտանիքում այլ նաև

ուսումնական հաստատություններում՝ ուսումնադաստիարակչական գործընթացի միջոցով: ՈՒսուցման դաստիարակչական ներգործությունը օբեկտիվ օրինաչափություն է, որովհետև աշակերտների համար ուսուցումը գործունեության հիմնական տեսակն է, դրա համար էլ այն կարևոր դեր է կատարում նրանց անձի ձևավորման գործում:

ՈՒսուցման գործընթացում լուծվում են սովորողների կրթական, դաստիարակչական կամ արժեքային և ընդհանուր զարգացման խնդիրները:

Դրա համար յուրաքանչուր դասի դաստիարակչական խնդիրների լուծումը նախատեսում է ոչ թէ մեկուսացված կամ առանձին մոտեցում այլ գիտելիքների և կարողությունների, արժեքային որակների, կամքի, բնավորության, զգացմունքների, հոգեբանական տարբեր դրսևորումների միաժամանակյա և փոխկապակցված մոտեցում:

«Եթե դուք ունակ եք որոշելու երեխայի ունակությունն ու նրա ուժը, դուք պետք է գիտենաք, որ ամենամեծ ուրախությունը՝ դժվարությունների հաղթահարման, նպատակին հասնելու, գաղտնիքի բացահայտման ուրախությունը հաղթանակի բերկրանքն է ու ինքնուրույն դառնալու, տիրելու ու տիրապետելու երջանկությունը»:

Յուրաքանչյուր դասի ժամանակ ուսուցիչը որոշակի դաստիարակչական խնդիրներ է լուծում՝ հաշվի առնելով տվյալ առարկայի և թեմայի ուսումնասիրական հիմնական խնդիրները, որոնք ներկայացված են առարկայական ծրագրերում: Նա առանձնացնում է ընդհանուր դաստիարակչական խնդիրները, որոնք առանձին աշակերտների մոտ հաճախակի են դրսևորվում:

ՈՒսուցիչը ուսուցման կազմակերպման տարբեր ձևերի ընտրության միջոցով (անհատական, խմբային, էքսկուրսիա, դասղեկական ժամ, արտադասարանական միջոցառումներ և այլն) առավել արդյունավետ է դարձնում աշակերտների արժեհամակարգային դաստիարակչական խնդիրների լուծումը: Օրինակ՝ խմբային աշխատանքի ժամանակ աշակերտները սովորում են ուշադրությամբ վերաբերվել միմյանց, միասին հաղթահարել դժվարությունները, միասին ձեռք բերել հաջողություններ, լսել հակադիր կարծիքներ, ընդօրինակել միմյանց և այլն: Հասակակիցների խմբում աշակերտն ավելի ազատ է արտահայտում իր մտքերն ու դատողությունները, գործում է անկաշկանդ, ինչն էլ նպաստում է ուսուցման արդյունավետ կազմակերպմանը: Անհատական աշխատանքում դաստիարակվում է աշակերտների ինտելեկտուալ պատրաստականությունը դժվարությունները հաղթահարելու գործում, ձևավորում են համառութուն, ինքնակազմակերպման և ինքնավերահսկման ընդունակություններ: Այսօր կրթությունը պետք է դառնա մեզ դարերով ավանդված ազգային, մշակութային, հոգևոր արժեքների փոխանցողն ու պահպանողը: Ազգային արժեքների ձևավորումն ու պահպանումն այսօր դպրոցի կարևորագույն նպատակներից է: Սովորողների արժեքային համակարգի ձևավորման և այն ամուր հիմքերի վրա դնելու խնդիրը ներկայումս դպրոցի գլխավոր առաքելությունը պետք է լինի:

ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵԱՎՈՐՈՒՄԸ ՄԱՅՐԵՆԻԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ՝ ՀԵՔԻԱԹԻ ՄԻՋՈՑՈՎ

Մայրենիի ուսուցումը արժեքներին հաղորդակցվելու լավագույն միջոցներից է: Սա նշանակում է, որ մայրենիի ուսուցումը չի ենթադրում և ներառում միայն լեզվական-քերականական նախնական գիտելիքների ուղղակի փոխանցում երեխային, այլ՝ դրանց միջոցով նաև ազգային հոգևոր ու բարոյական արժեհա-մակարգին հաղորդակցման ապահովում:

«Մարդու կյանքի ամենամեծ երջանկությունը ուրիշներին օգտակար լինելու մեջ է»:

«Գիտելիքները մարդուն կշիռ են տալիս, իսկ արարքները՝ փայլ»:

Ահա ինչն է ամենակարևորը մարդու համար:

Անգնահատելի է նաև հեքիաթի դերը անհատի դաստիարակության ու ձևավորման, չարն ու բարին ընկալելու գործում: Տարրական դասարաններում այս կամ այն դասանյութի ուսումնասիրումը հիմնականում իրականացվում է ընթերցանության միջոցով, որը հնարավորություն է տալիս կազմակերպել երե-խաների ինքնուրույն գործունեությունը և նպաստել նրանց մտածողության, տրամաբանական, հաղորդակցական, համագործակցային, ինքնուրույն գոր-ծունեությոան և ստեղծագործական ունակությունների զարգացմանը:

Դասին ներկայացվող կարևորագույն պահանջ և յուրաքանչյուր դասի բնորոշ հատկանիշ է ուսումնական նպատակի հստակությունը, դաստիարակող և զարգացնող խնդիրների անխզելի կապը և այդ խնդիրների հստակ ու հետևողական իրագործումը: ՈՒսումնական ծրագրի բովանդակությունը, դասի ուսումնական դաստիարակչական և զարգացնող խնդիրները, աշակերտների տարիքը, նրանց գիտելիքների մակարդակը, հմտություններն ու կարողությունները համատեղ պայմանավորում են նյութի ընտրությունը, դրանում գլխավորի առանձնացումը, ինչպես նաև դասի ժամանակ ուսուցչի օգտագործած մեթոդներն ու հնարները:

Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը մայրենի առարկայի դասավանդման ընթացքում մենք իրականացնելու ենք հեքիաթների միջոցով, օգտվելով՝ զրույցի մեթոդից:

Դիդակտիկ և մեթոդական գրականության մեջ կան տարբեր տիպի դասերի նկարագրություններ և դրանց կառուցվածքի սահմանումներ: Այդ տիպի դասերից են ներածական դասը, խառը կամ համակցված դասը, նոր գիտելիքների ուսումնասիրման դասը, զրույց-դասը, գիտելիքների ստուգման և գնահատման դասը, կրկնության-հանրագումարային դասերը, կինո-դասերը, էքսկուրսիոն դասը, սեմինարների դասը:

Թվարկվածներից առավել գործածականը և արդյունավետը, մեր համոզմամբ, զրույց-դասն է, որին ստորև կանդրադառնանք փոքր-ինչ հանգամանորեն:

Զրույց դասը կիրառվում է սովորողի մտավոր գործունեությունն ակտի-վացնելու նպատակով: Զրուցի ընթացքում սովորողը կրկնում և ամրապնդում է անցած նյութը, ձեռք բերում նոր գիտելիքներ: Ի հայտ են գալիս սովորողի ան-հատական առանձնահատկությունները, մշակվում են տրամաբանորեն մտածելու, փաստերի և երևույթների միջև նոր կապեր հաստատելու, ուշադիր լսելու, վիճելի հարցերին քննադատաբար մոտենալու և կոլեկտիվ ձևով լուծելու կարողություններ: Զրույցը չի ընթանում խստորեն մշակված պլանով, կիրառվում է ուսումնական պրոցեսում այլ մեթոդների հետ զուգակցված: Սովորողների հետ աշխատանքում չափազանց կարևոր է ընտրել հաղոր-դակցման նրանց լեզուն, մեթոդները, այսինքն՝ խոսել նրանց լեզվով: Այդ պատ-ճառով, հեքիաթները սովորողների հետ շփման արդյունավետ միջոցներից մեկն են համարվում: Հեքիաթը սովորողի հոգեկան զարգացման համար այնպիսի կարևոր միջոց է, ինչպիսին որ խաղն է: Սովորողի ծանոթացումն արտաքին աշխարհի և մարդկանց փոխհարաբերությունների հետ սկսվում է մանկական հեքիաթներով: Ժամանակից սովորողին բավարար չէ պարզապես հեքիաթ կարդալ, զրուցել բովանդակության և նրա հերոսների մասին: Մասնագետները նշում են, որ անհրաժեշտ է նրանց սովորեցնել բացահայտել հեքիաթում թաքնված իմաստները և կյանքի դասերը:

Հետաքրքիր է Ի. Վաչկովի տեսակետը, համաձայն որի հեքիաթները օգտագործում են և՛ բժիշկները, և՛ հոգեբանները, և՛ մանկավարժները և յուրաքանչյուր մասնագետ հեքիաթը կիրառում է որպես այնպիսի ռեսուրս, որը կօգնի լուծել իրենց մասնագիտական խնդիրները:

Մարդու կանքում դպրոցական տարիքը այն շրջանն է, երբ դրվում են անձնային որակների, բարոյական զգացմունքների, գնահատումների հիմքերը:

Երեխան սկսում է գնահատել ինչպես ուրիշի, այնպես էլ իր լավ ու վատ արարքները:

Հոգեբանների ուսումնասիրությունները ցույց են տվել, որ դպրոցական տարիքի երեխաների մեջ դաստիարակված հատկություններն ու բնավորության գծերը հետագայում վճռական ազդեցություն են ունենում նրա անձնավորության ձևավորման գործում: Դրա համար անհրաժեշտ է դեռ վաղ տարիքից մեծ ուշադրություն դարձնել նրա բարոյական դաստիարակությանը: Բարոյական դաստիարակության ընթացքը առաջին հերթին ենթադրում է բարոյական որակի ձևավորում: Բարոյական դաստիարակութան ընթացքում, բարոյական գիտակցության հետ մեկտեղ ձևավորվում են անձնային կարևոր որակներ: Այդպիսի որակներից են, օրինակ, բարությունը, մարդասիրությունը, ընկերասիրութունը, հայրենասիրութունը, մաքրասիրությունը, հավատարմությունը, ազնվությունը և այլն: Դպրոցական տարիքում նշված անձնային որակներն ու հատկությունները ձևավորելու տարբեր ուղիներ և մեխանիզմներ կան, սակայն ընդունված լավագույն միջոցներից մեկը սովորողի և գեղարվեստական գրականության, մասնավորապես հեքիաթի, ամուր կապն ապահովելն է: Հեքիաթների դերը սովորողի զարգացման գործում բազմազան է. սկսած երևակայությունը զարգացնելուց մինչև ճիշտ խոսքի ձևավորում: Հեքիաթը սովորողներին մատչելի լեզվով կյանք է սովորեցնում, պատմում չարի ու բարու մասին: Սովորողները ավելի հեշտ են ընկալում հեքիաթը, քան մեծահասակների դաստիարակչական քարոզները: Հեքիաթների հիմնական նպատակն է զարգացնել սովորողի երևակայութունը և ստեղծագործական պոտենցիալը: Մանկական հեքիաթները ընդլայնում են սովորողի բառապաշարը, օգնում են ճիշտ և տրամաբանական խոսք կազմել: Կարևոր է նաև այն, որ հեքիաթները երեխայի խոսքը դարձնում են ավելի էմոցիոնալ և պատկերավոր, ձևավորում են նաև հարցերը ճիշտ ձևակերպելու ունակություն: Դպրոցական տարիքում է ձևավորվում այնպիսի կարևոր զգացմունք ինչպիսին է ապրումակցումը: Ապրումակցումը այն զգացմունքն է, որը հնարավորություն է տալիս երեխային իրապես ապրել հեքիաթի հերոսների կյանքով՝ տխրել, երբ հեքիաթի հերոսների հետ դժբախտություններ են կատարվում, իրենց վրա վերցնել հեքիաթի հերոսների կերպարն ու վարքագիծը, ինչն էլ արդեն դաստիարակչական մեծ նշանակություն է ստեղծում, որպեսզի իրական կյանքում ևս իրենք կարողանան դրսևորել անձնային դրական որակներ, հատկություններ: Այդ մարդասիրության զգացողությունը հնարավորություն է

տալիս տեղափոխելու իրական կյանք սովորողի այն դրական հատկություններն ու որակները, վարքի ընդունված ձևերը, որոնք գովերգվում են հեքիաթում: Եվ մեծահասակների օգնությամբ սովորողի մեջ ձևավորվում է հասարակայնորեն ընդունելի վարքի ձևերի և անձնային որակներ կամ դրվում են նրանց հիմքերը:

ՍԵՓԱԿԱՆ ՓՈՐՁԱՌՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

Ներկայացնեմ Հովհաննես Թումանյանի «Խոսող ձուկը» հեքիաթի միջոցով արժեհամակարգի ձևավորումը:

Նախապատրաստական զրույց.

Հարցադրումների միջոցով աշակերտները հիշեցին, թե որ ժանրին է պատկանում «Խոսող ձուկը» հեքիաթը: Ապա առաջարկում եմ աշակերտներին իրենց տրված ծրարներից ընտրել այն բառերն ու արտահայտությունները, որոնք առնչվում են բարության, ընկերասիրության, լավ կատարած գործի մասին: Այնուհետև ներկայացնում եմ «Խոսող ձուկը» հեքիաթը, որը բարության մասին է:

Հեքիաթի ընթերցում.

Հովհաննես Թումանյանի «Խոսող ձուկը» հեքիաթի ասածը սա էր՝ «Լավությունը արա ու թեկուզ ջուրը գցի՝ չի կորչի», այս հեքիաթում ծերուկ շալակատարը ձկնորսությամբ էր զբաղվում, որպեսզի պահի իր ընտանիքը: Մի օր ձուկ բռնելիս նրա մեղքը տվեց և ձկանը ետ գցեց ծովը: Իսկ այդ ձուկը կենդանացավ, օգնեց ծերուկ շալակատարին:

Այնուհետև երեխաներին տվել եմ մի քանի հարց:

Հարցեր՝

1. Ո՞րն է հեքիաթի հիմնական նպատակը:

2. Ինչպիսի՞ կերպար էր շալակատարը (չար, բարի և ինչու՞):

3. Ինչպիսի՞ վերաբերմունք ցուցաբերեց ձկնորսը շալակատարի նկատմամբ:

4. Ինչու՞ օգնության ձեռք մեկնեց երիտասարդ հյուրը:

Երեխաները տվեցին տարատեսակ պատասխաններ:

Ամփոփելով երեխաների տված պատասխանները, վեր հանելով հեքիաթի հիմնական գաղափարը և հաշվի առնելով երեխաների տարիքային առանձնա-հատկությունները ես դասի ընթացքում կարողացա երեխաների մեջ ձևավորել զգացողության, ընկերասիրության, մարդասիրության, բարության, և այլ անձնային որակներ կամ դրվեցին դրանց հիմքերը, որոնք էլ շարունակական աշխատանքի ընթացքում հիմք են հանդիսանալու արժեքային համակարգի ձևավորմանը:

Երեխաները տվեցին մեկը մուսից հետաքրքիր պատասխաններ, սակայն անհրաժեշտ էր պարզել թե որքան է նրանց խոսքը համապատասխանում նրանց վարքին: Այս արդյունքները ամփոփելու համար, սովորողներին առաջարկեցինք պրոբլեմային իրավիճակ, որտեղ կդրսևորվեր նրանց մարդասիրությունն ու բարյացկամությունը: Իրավիճակի էությունը հետևյալն էր. Սովորողներից յուրաքանչյուրին տրվեց մետաղադրամ, որով նա կարող էր իր համար գնել քաղցրավենիք, կամ կարող էր տալ մուրացկաններին: Դասասենյակը ձևավորվեց. Ինչպես նաև սովորողների միջից ընտրվեցին քաղցրավենիք վաճառողներ և մուրացկաններ:

Արդյունքում, սովորողների մեծամասնությունը մետաղադրամը տալիս էր մուրացկաններին, իսկ նրանք ովքեր քաղցրավենիք էին գնում, դա նույնպես ունենում էր իր դրական ազդեցությունը:

Այսպիսով, առաջարկված խնդրահարույց իրավիճակը օգնեց պարզելու, թե որքանով են երեխաները պատրաստակամ օգնելու և զիջելու, բարի գտնվելու միմյանց նկատմամբ, ինչպես նաև որոշ երեխաներ իրենք ունեցան ընկերների օգնության և ուշադրության կարիքը, ինչը փոխեց նրանց վերաբերմունքը;

Հեքիաթի ուսուցման գործընթացը ամփոփել եմ ԳՈՒՍ մեթոդով:

Գիտեմ	Ուզում եմ սովորել	Սովորել եմ

Այսպիսով՝ երեխաներն իրականությունը պատկերավոր են ընկալում, իսկ հեքիաթները հենց նպաստում են իրականության ճիշտ ընկալմանը: Հեքիաթ-ներում միշտ հաղթում է բարին, ինչը երեխային կօգնի հաղթահարել կյանքի դժվարությունները՝ ենթագիտակցությունում ունենալով բարու հաղթանակի գաղափարը: Եվ ահա հեքիաթների դրական ազդեցությունը նպաստում է, որ սովորողների մեջ ձևավորվի արժեքային համակարգ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կարող ենք եզրահանգել, որ արժեքային համակարգի ձևավորումը ժամանակակից դպրոցի գերխնդիրն է և մշտապես պետք է լինի մանկավարժների ուշադրության կենտրոնում: Կրթության հենքը և գլխավոր իմաստը պետք է դառնա արժեհամակարգի ձևավորումը: Դպրոցը պետք է լինի օրինակելի տարածք, ուր հաստատուն են էթիկական նորմերը, ուր աշաերտները սովորում են դրանց համապատասխանել:

Հետազոտական աշխատանքը ուսումնասիրելուց հետո կատարեցինք մի քանի արձանագրումներ.

- Կրթության հենքը և գլխավոր իմաստը պետք է դառնա արժեհամակարգի ձևավորումը:
- Դպրոցում աշակերտը պետք է ընկալի համակեցության նորմերի իմաստը և ընդունի դրանք: Այդ ամենի պտուղները կլինեն իրական արժեքները:
- Ե՛վ լեզուն, և՛ մշակույթը մեծ դեր են խաղում աշակերտների անհատականության և արժեհամակարգի ձևավորման մեջ:
- Արժեքային համակարգը ձևավորվում է մտավոր, բարոյական, աշխատանքային, գեղագիտական, ֆիզիկական, իրավական, տնտեսագիտական, էկոլոգիական դաստիարակվածության արդյունքում:
- Արժեքային համակարգի ձևավորման գործընթացը պետք է լինի նպատակային և կազմակերպված, երկար և շարունակական:
- Մայրենիի դասընթացը ներառում է գրական հարուստ ժառանգություն, այդ թվում՝ բանահյուսական ստեղծագործությունների բազմաթիվ նմուշներ, որոնց ուսումնասիրումը նպատակաուղղվում է նոր սերնդին ճիշտ դաստիարակելու, բարոյակրթելու, նրա արժեհամակարգը ձևավորելու, շրջապատող աշխարհի նկատմամբ վերաբերմունք, համատեղ աշխատելու՝ համագործակցելու կարողություններ ձևավորելու մշտատև գործին:

- Դասի ընթացքում որքան շատ են արժեհամակարգի ձևավորմանը միտված աշխատանքները, այնքան զարգանում է արժեհամակարգը, աշակերտը դառնում է կիրթ, առաքինի և հետագայում մենք ունենում ենք քրիստոնեական արժեհամակարգով օժտված քաղաքացիներ:

Այսպիսով՝ ուսումնական ծրագրերով նախատեսված բոլոր առարկաները սովորողների մեջ ձևավորում են բարձր արժեքներ և այն իր ազդեցությունն ու բարոյախոսությունն ունի:

Անդրադառնալով Ալբեր Կամյուի գործին, համաձայնենք. «Եթե մարդը չի ուզում կորչել իրեն խեղդող թնջուկների մեջ, ապա դրանք պիտի կտրի մեկ հարվածով և ստեղծի սեփական արժեքները»:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ա. Գևորգյան, Ազգային կրթության դերն ու նշանակությունը սովորողների հայեցի դաստիարակության գործընթացում, Եր. 2002թ.:

2. Արմինե Սարգսյան, Արման Մալոյան, Հայոց պատմությունը 10-11-րդ դասարաններում:

3. Բաբանսկի Յու. – Աշակերտների դաստիարակությունը կոմպլեքսային մոտեցում:

4. Զեյնալյան Ն.Ա. Անձի արժեհամակարգի ձևավորման աշխարհայացքային նախադրյալները, 2017թ.:

5. Մուդրիիկ Ա. Վ. – Դպրոցականի անձը և նրա դաստիրակությունը կոլեկտիվում - Երևան 1986:

6. «Նախաշավիղ» գիտամեթոդական ամսագիր:

7. Սուխոմլինսկի Վ. Ա., Սիրտս նվիրում եմ երեխաներին, Երևան, 1977թ.: